ՏԵՂԵԿԱՆՔ

«Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին *Կ-054-06.07.2017-ՊԻՄԻ-011/0 օրենքի նախագծում կատարվածփոփոխությունների և լրացումների*

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Comment [a1]: Կատարված փոփոխությունից ելնելով նախագծի վերնագրից հանվել են <ԵՎ ԼՐԱՑՈՒՄ> բառերը

Հոդված 1. «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 26-ի ՀՕ-229 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «30 օրվա ընթացքում» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերը փոխարինել «դատական կարգով» բառերով.

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) վերնագրից հանել «եւ բողոքի» բառերը.

2) 1-ին մասի առաջին պարբերությունում «անհրաժեշտ փաստաթղթերի հետ, դիմումը (սույն օրենքի 5-րդ հոդված) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը փաստաթղթերն» բառերը փոխարինել «հայցողի դիմումը» բառերով, իսկ «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

3) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Որոշումն ընդունելիս հաշվի են առնվում հայցողի ներկայացրած փաստական տվյալները, լիազոր պետական մարմնի ձեռք բերած տեղեկությունները, այդ թվում՝ հայցողի վերաբերյալ իրավասու մարմիններից ստացված եզրակացությունները, հայցողի տվյալների համապատասխանությունը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «քաղաքական ապաստան» հասկացությանը».

Comment [a2]: Սույն մասը ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «3) 1-ին մասի երկրորդ պարբերությունում <3 ամիս> բառերը փոխարինել <6 ամիս> բառերով.» Կատարված փոփոխությունից ելնելով նախագծի վերնագրից հանվել են <ԵՎ ԼՐԱՑՈՒՄ> բառերը

4) 2-րդ մասում «ներկայացմամբ եւ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից» բառերը փոխարինել «որոշմամբ» բառով.

5) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Լիազոր պետական մարմնի» բառերով.

6) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի» բառերը փոխարինել «Օտարերկրացիների» բառով.

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «միջնորդությամբ դադարել» բառերը փոխարինել «որոշմամբ դադարեցվել» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդված 1-ին մասում «մարմինն առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերը փոխարինել «մարմինը որոշում է ընդունում» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ գլխի ուժի մեջ մտնելու օրը: